ներդաշնակ արտայայտութեան գիտակցութիւնը։ Դիտեցէք պատկեր 213 և 214, շղթայուած առիւծների դիրքը, Դաւթի կանոնաւոր և մշակուած դէմքը իւր գործիքի վերայ նուագող ձեռքով, մատաղահաս Մարիամի խոշոր աչքերով, մանրիկ բերանով կուսական արտայայտութիւնը (պատկեր 216)։ Նչեցու գլուխը (պատկեր 212), ծննդեան տեսարանը իւր բարդ մանրամասնութիւններով (պատկեր 215), թռչող ձիու վերայից վիշապին նիզակով շամփրող Ս. Դէորգը (պատկ. 219), խորանների համեմատական ճոխութիւնն ու գաղանների ու թռչունների կեանքն ու շարժումը, մանրանկարչական տառերի, երբեմն ֆանտաստիկ, բայց չափի զգացմունքը պահուած ձեւակերպութեամբ, լուրջը հումորի հետ խառնուած, և կը համոզուիք, որ այստեղ կարող և մի բազմաբովանդակ արուեստագէտի հետ գործ ունինք։

Վենետկի Մխիթարեանների № 1108 ժողովածու ձեռագիրը գրուած է «ի թվ. ՉԿԷ» (= 1318). գրիչն է դարձեալ վերև յիշուած Սարգիսը. «ես Սարգիս համբակ և սպասաւոր բանի տկար մարմնով եւ տառապեալ անձամբ բազում աշխատութեամբ ծրագրեցի զսայ իմովս փցուն և անարհեստ մատամբ գուսարեցի զսայ իրը զմեղու որ զխորիսխն ժողովէ ի վայելուչ (s) բուրաստանաց ի բջիջս մաղու իւրոյ նախ ի պէտս իւր եւ ապա ի բժշկութիւն հիւանդաց եւ ի պէտս թագաւորաց եւ իշխանաց։ այնպէս եւ ես կամեցա զսա ամբարել ի քարտի. . . Եւ եղև կատարումն գրոցս։ ի թվ. ՉԿԷ։ ի գաւառիս Վայոց ձորոյ յանապատս Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, եւ մեծ վարդապետի, եւ անյախթ (s) հռետորի՝ Եսայեա։ ի թագաւորութեան Հայոց Աւշնի եւ ի կաթողիկոսութեան (անունը բաց, թուղթը պատռուած) եւ յիշխանութեան գաւառիս։ Ամիր Հասանայ։ Որդոյ Իսէէ, որդոյ Ամիր–Հասանայ։ Որդոյ Պռոշայ բարեպաշտի» (*)։

Նոյն 1318 թուին գրուած է մի ուրիշ ժողովածու (**), որի յիշատակարանները (81ա. 130ա. 201ա. 263ա.) գաղափար են տալիս ձեռագրի ծագման մասին. գրուած է «յամսեանն ապրիլի, իե.։ համբակ եւ պատանեակ Եփրեմ»ի ձեռքով, «հրամանաւ իմոյ տնուցողի եւ վարդապետի Մարտիրոս սրբասէր եւ ճգնա-



Պատկեր 212.

(*) N. Y. Marr, Sbornik Pritcht Vardana, S. P. 1899, 459/60։ Ձեռագրի բովանդակութիւնն էր նիւսացու ինն երգութիւնների և Հայր մերի մեկնութիւնները, Հարանց վարք, Շնորհալու Ընդհանրականը, «Պլուղին կանոնքն», Ոլոմպիանի առակները ևն.։

(**) Ձեռ. Լ.Ջմ. № 1429/1419. կաշէկազմ, 16,8 × 11½ × 6 սմ., թուղթ, 16,7 × 12,2 սմ., բոլորգիր 13,6 × 9 սմ. գրուած մասը։ Բովանդակութիւնն է. Ա) 1ա — 81ա. ցայտնութիւն ցովհաննու, սկզբից թերի, սկսւում է Զ. 5 համարի մեկնութիւնից՝ «յԱնդրիասէ եպիսկոպոսի Կեսարու»։ Բ) 82 — 130ա. «Տեսութի. քննութիւ. աղաւթից սբ. աւետարանչին ցովհաննու ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի ցակոբցոյ, ի ներսիսէ աշակերտէ իւր և հոգևոր որդեկէ». Սկզ. «Գիր քոյոյ պատուականութեդ.»։ Գ) 131ա — 201ա. «Եւագրեա Նշանակ յեղեկիէլէ». Սկս. «ցորժամ Բասիլիոս վախճանեցաւ»։ Դ) 202ա — 263ա. «Բազմերջանիկ եւ տիեզերաքաղ սբ. վարդապետին Վարդանայ. Հաւաքումն մեկնութեց. երգոյ երգոյս ի խնդրոյ լուսաւոր առն Կիրակոս վարդապետի» (Դանձակեցին է). Սկս. «Նման է արքայութիւն. Այ. դանձի ծածկելոյ»։